ԳԻՍԱԿ
ԱՄԲԵՆ ՈՒ ՌԱՄԲԵՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

ԱՄԲԵՆ
ՈՒ
ՌԱՄԲԵՆ

(Հնդկական զրույց)

Ի մեծ տուն — մեջն ապրում եր խորամանկ կատուն։

Ի մեծ տուն — տան մեջ բազմաթիվ մկներ։

Կատուն վորսում եր մկներին, անուշ անում և ազատ կյանք քաշում։

Ժամանակ անցավ... Կատուն ծերացավ, եվ առաջվա ուժը չուներ, դժվար եր նրա համար մկներ վորսալը։

Մտածեց, մտածեց ու վերջը հնարը գտավ։

Ժողովեց բոլոր մկներին ու ասաց.

— Լսեցեք, մուկիկներ, յես եմ կանչել ձեզ։ Ուզում եմ ընությունս փոխել։ Վորոշել եմ այլևս ձեռք չտալ ձեզ։ Ազատ, անհոգ վազվզեցեք, մի վախենաք ինձանից. ինձանից ձեզ եվ վտանգ չկա։ Բայց մի պահանջ եմ դնում ձեր առաջ. ամեն որ, որը յերկու անգամ իրար հետևից իմ առաջով պետք է անցնեք, մեկ-մեկ գլուխ տաք և հետևաք։ Ցես ձեզ ձեռք չեմ տա։

Մկները վոր լսեցին, թե կատուն իրենց ձեռք չի տալու, ուրախությունից վեր-վեր թռան, և եվ ինչ խոսք, բոլորն եվ պայմանին հավան կացան։

Ցեվ այսպես, կատուն նստեց անկյունում, իսկ մկները մեկ-մեկու յետևից սկսեցին անցնել նրա առաջով։

Անցնում են և գլուխ տալիս։ Իսկ կատուն հանգիստ դիրք եր ընդունել։ Հենց վոր վերջին մկնիկը մոտեցավ, կանգ առավ և գլուխ տվեց, մեր կատուն՝ հափ — վրա ընկավ և բռնելն ու ուտելը մեկ յեղավ։

Մյուս մկներն արդեն առաջ եյին անցել և վոչինչ չնկատեցին։

Ցեվ այսպես՝ որը յերկու անգամ, կատուն հանգիստ

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
30643

891.99-93

Н 38152

որական յերկու մուկ եր անուշ անում ու շատ գոհ եր իր վիճակից։

Յերկու մտերիմ՝ Ամբեն ու Ռամբեն նկատեցին, որ քանի գնում, այնքան իրենց ընկերների թիվը պակասում է։ Մի լավ միտք արին ու վորոշեցին կատվին հետևել։

Ամեն անգամ, հենց որ մկների յերթն սկսվում եր, իրենց վորոշման համաձայն, Ամբեն քայլում եր առաջից, իսկ Ռամբեն՝ ամենից վերջը։

Անցավ Ամբեն, խորը գլուխ տվեց կատվին և ձայն տվեց ընկերոջը.

— Յեղբայր Ռամբե, վորտե՞ղ ես։

— Այստեղ եմ, այստեղ, յեղբայր Ամբե, — պատասխանեց Ռամբեն մյուս ծայրից։

Ու այսպես նրանք շարունակ միմյանց ձայն եյին տալիս, մինչև որ բոլոր մկները կատվի մոտից հեռանում եյին։

Զարանում եր կատուն, բայց հենց որ Ամբեյի ձայնը լսում եր, չեր համարձակվում ձեռք տալ Ռամբեյին։

Զարանում եր, բայց ճարն ինչ, քաղցած փորով պառկում եր քնելու։

Հետևյալ օրը նույն բանը կրկնվեց. Ամբեն կանգնում եր, Ռամբեն պատասխանում։ Դարձյալ կատուն վախենում եր դիպչել Ռամբեյին ու դարձյալ պառկում եր քաղցած փորով։

Յերրորդ օրը մկները, ինչպես միշտ, անցնում եյին կատվի առջևով։ Ամբեն կանչեց բարձրաձայն.

— Յեղբայր Ռամբե, յեղբայր Ռամբե, վորտե՞ղ ես։

— Այստեղ եմ, յեղբայր Ամբե, այստեղ եմ, — ձայնակցեց Ռամբեն, իսկ ինքն աչքի տակով նայեց կատվին, որ չլինի թե հանկարծ հարձակվի։

Համբերությունից դուրս յեկավ կատուն, թռավ մկան վրա, բայց Ռամբեյի հետքն անգամ չեր մնացել։

Մնացած բոլոր մկներն ել փախան այս ու այն կողմ. տեսան, որ գործ ունեն խաբեբա կատվի հետ, որ նրանից վտանգն անպակաս է։

Ու այն որվանից մկներն այլևս կատվի առաջով չեյին անցնում յերբեք։

ՈՎ Ո՞ՒՄԻՑ ՎԱԽԵՑԱՎ

(Ռուսական հեքիաթ)

—Խրճիթում ամենևին ջուր չկա, —ասաց տատիկը, —գնամ առուն, ջուր բերեմ։

Դույլերն ուսափայտով վերցրեց ու գնաց։

Նայեց թոռնիկը, նրա սիրտն ել ջուր ուզեց. վերցրեց ավելի փոքր դույլեր, հագցրեց ուսափայտի ծայրերին ու գնաց։ Նայեց աքլորիկը, նա ել ուզեց իր համար ջուր բերել։ Վերցրեց ել ավելի փոքր դույլեր, հագցրեց ուսա-

փայտի ծայրերին ու վազեց տատիկի ու թոռնիկի յետևից։ Մուկիկն իր ծակից դուրս նայեց։ Նա էլ ուզեց իր համար ջուր բերել, վերցրեց ամենափոքր դույլերը — մատնոցի չափ, — հագցրեց ուսափայտի ծայրերին ու վազ տվեց։

Ջրով լիքը դույլերով տուն եյին դառնում։

Առջևից գնում եր տատիկը, նրա յետևից թոռնիկը, ապա աքլորիկը, իսկ բոլորից վերջը հանդիսավոր կերպով քայլում եր մուկիկը։

Ճանապարհի վրա, հասած խնձորենու տակ պառկել — քնել եր մոխրագույն նապաստակը։ Գիշերը դաշտում յերկար այս կողմ, այն կողմ վազվզելուց հոգնել եր և հիմա հանգըստանում եր։

Քամին որորում եր խնձորենու ճղները, վորոնք ծանրաբեռնված եյին հյութեղ, խոշոր խնձորներով։

Հանկարծ մի խնձոր պոկվեց ու թըլըմփ — ուղիղ նապաստակի ճակատին։ Նապաստակը սրտաճաք յեղած՝ քնից վեր թռավ և փաթաթվեց ուղղակի տատիկի վոտներին։

Վախեցավ տատիկը, վայր ընկավ, ջուրը թափեց։ Հետո վեր թռավ, վազեց ու թաքնվեց։

Նապաստակն սկսեց վազել և արշավեց ուղղակի թոռ-

նիկի վրա։ Թոռնիկն ընկավ, ջուրը թափվեց, հետո վեր ցատկեց, վազեց ու թաքնվեց։

Ավելի շատ վախեցավ նապաստակը և յերկյուղից այլևս վոչինչ չտեսնելով, թռավ ուղղակի աքլորիկի վրա։

Աքլորիկը բարձր ծղրտաց, վայր գցեց դուլլերը։ Հետո վազեց ու թաքնվեց։

Մուկիկը հենց վոր նկատեց փախչող նապաստակին, վայր նետեց իր փոքրիկ դուլլերը, փախավ — մտավ իր բունը։

Նստել եր տատիկն ու մտածում եր.

— Լավ ազատվեցի արջի ձեռքից։

Նստել եր թոռնիկն ու մտածում եր.

— Ինչ լավ ազատվեցի գայլի ձեռքից։

Աքլորիկը նստած մտածում եր.

— Ինչ բախտ եր, վոր կարողացա ազատվել կատաղի աղվեսից։

Մուկիկը բնում նստած մտածում եր.

— Ա՜յ թե լավ փախա գազան կատվի ձեռքից։

Իսկ նապաստակը, իր բոլոր ուժերը լարած, առանց յետ նայելու՝ դեռ շարունակում եր վազել, վազել անտառ ու թաքնվեց տերևների կույտի մեջ։

Խեղճը հազիվ եր շունչը յետ բերում։ Յերկար ժամանակ չեր կարողանում ուշքի գալ։

Վերջապես շունչը յետ բերեց, ուշքի յեկավ, մտածեց.

—Համա ահ կերա, հա՛... Վոնց ելին յետևիցս ընկել. քիչ մնաց բռնեյին, բայց ինձ շլդիկ կասեն, փախա ու ազատվեցի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Պատ. խմբագիր՝ Նդ. Զոփուրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Նկարիչ՝ Նելլի Լի
Սրբագրիչ՝ Ս. Շանբազյան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038152

Գլավլիտի լիազոր Հ. Մ. 1102. Պատվեր 674. Հրատ. 3726.
Պետհրատի տպարան, Երևան, II Պուշկինի, № 4

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ.
[0.54.]
А II 38152

ГИСАК
АМБЕ И РАМБЕ

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.